

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՅՈՒՍԵՖ ԱՍԳՅԱՐ ԱՖԱՐԻՆԻ

ՀԵՐՈՍԻ ԵՎ ՀԱԿԱՀԵՐՈՍԻ ԽՆԴԻՐԸ ԱԲՍՈՒՐԴԻ ՂՐԱՄԱՅՈՒՄ

Ժ. 01. 04 - «Գրականության տեսություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Ե Ր Ե Վ Ա Ն - 2013

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ԷՊՅԱՆ ՀԵՆՐԻԿ ԱՆՏՈՆԻ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ՄԱՅԱԿԱՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ ՀՐԱՆՏԻ

բանասիրական գիտությունների
թեկնածու

ՍԵՄԻՐՋՅԱՆ ԱԼՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

Առաջատար կազմակերպություն՝

**Երևանի Վ. Բրյուսովի անվան
պետական լեզվաբանական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2013 թ. դեկտեմբերի 25-ին՝ ժամը 14³⁰-ին, ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՀ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն՝ ք. Երևան 25, Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի ֆակուլտետի մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. նոյեմբերի 25-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ԱԼ. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է արևուրդի դրամայում հերոսի և հակահերոսի հիմնախնդրին: Փորձ է արվում ուսումնասիրել ավանդական, ժամանակակից ու պոստմոդեռնիստական մշակութային տարբերությունները, վեր հանել արևուրդի դրամայի կերպարները դիտարկելու և դրանք առավել դյուրըմբռնելի դարձնելու միջոցները:

Աշխատանքի ընթացքում ըստ հարկի ուսումնասիրվում են ավանդական, ժամանակակից և պոստմոդեռնիստական դրամայի սկզբունքները, մասնավորապես «հերոս», «հակահերոս» և «ոչ-հերոս» հասկացությունները: Քանի որ հերոսի նկարագիրը պատմության յուրաքանչյուր ժամանակահատվածում համընկնում է հասարակության հիմնական պահանջներին ու պայմաններին, ուստի անհրաժեշտաբար ծագում է նաև պոստմոդեռնիստական սոցիալական վիճակի մանրամասն ուսումնասիրության խնդիրը, որտեղից սկիզբ է առնում արևուրդի դրաման: Ի հավելումն այս ամենի՝ աշխատանքում բնութագրվում են նաև արևուրդի դրամայի կերպարների բնավորության հատկանիշները՝ վեր հանելով ավանդական դրամայի ու արևուրդի դրամայի կերպարների տարբերությունները: Քանի որ արևուրդի դրաման առավելապես հայտնի է որպես հակադրամա, ուստի, որպես հաջորդ քայլ, արևուրդի դրամայի դրական և բացասական կերպարները բնութագրելու նպատակով առաջարկվում է կիրառել «ոչ-հերոս» եզրույթը՝ որն ավելի ճշգրիտ է դարձնում կերպարի փիլիսոփայական և գեղագիտական նկարագիրը արևուրդի դրամայում:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թեմայի **արդիականությունը** պայմանավորված է՝

1. Արևուրդի դրամայի առաջադրած հարցերը (հասարակական թե սոցիալական, փիլիսոփայական, կրոնական թե բարոյահոգեբանական), որոնք վերջնական պատասխաններ չունեն, մշտապես շոշափվում են նաև ընթացիկ՝ ժամանակակից գրականության մեջ:

2. Տեսական և գործնական բնույթի աշխատությունների անհրաժեշտությամբ, որոնց հիմնադրույթների կիրառումը կխթանի ոլորտի գործունեության բարելավումը:

Սույն ատենախոսությունը կարող է օգտակար լինել արևուրդի դրաման ուսումնասիրողների, ինչպես նաև բուհերի հասարակագիտական ֆակուլտետների ուսանողների և, մասնավորապես գրականության տեսությամբ զբաղվող մասնագետների համար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՈՒՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության **առարկան** արևուրդի դրամայում հերոսի և հակահերոսի լայն քննությունն է:

Ատենախոսությունը հիմնականում առաջադրում է մի քանի հարցեր, որոնք միտված են բացահայտելու հետևյալ խնդիրները.

Պատմության ընթացքում մարդկությունը հավատացել է տարբեր արժեքների ու հակաարժեքների, որոնք միմյանցից տարբերվել են հասարակական ընկալումներով: Յուրաքանչյուր ժամանակաշրջանում թատրերգության կերպարների վարքագիծը կախված է նույն ժամանակահատվածի արժեքներից, իսկ հերոսն արձագանքում է այդ արժեքներին՝ առաջնորդվելով դրանց հենքի վրա հյուսված սեփական գաղափարներով: Ատենախոսության առաջին հարցն է՝ ապացուցել, որ պոստմոդեռնիստական իրավիճ-

ակը ձևավորում է արտուրդի դրաման, և նմանատիպ հասարակության մեջ գոյություն չունի հստակություն կամ անկախություն:

Ուսումնասիրության երկրորդ հարցն է՝ ցույց տալ, որ արտուրդի դրամայի կերպարները մարմնավորված են պոստմոդեռնիստական հասարակության պատկերում. նրանք չունեն առաջընթացի և գործելու բավարար շարժառիթներ: Ահա թե ինչու արտուրդի դրամայում չկան հերոսներ ու հակահերոսներ:

Երրորդ հարցը արտուրդի դրամայի կերպարների առանձնահատկություններն ու ավանդական դրամաների կերպարների համեմատ նրանց տարբերությունները ներկայացնելն է, ինչն էլ հնարավորություն է տալիս մատնանշելու, որ նման կերպարները ներքուստ կապված են քաղաքական-հասարակական, կրոնական և պատմական-փիլիսոփայական շարժառիթների հետ:

Ուսումնասիրության չորրորդ հարցը արտուրդի դրամայի դիպաշարային (սյուժետային) զարգացման տարբերությունն է ավանդականից, անգամ նրանց բացահայտ հակադրությունը մեկը մյուսին, որով պոստմոդեռնիստական վիճակը վերածվել է հակաթատրոնի:

Հինգերորդ հարցն է պարզաբանել, որ արտուրդի դրամատուրգները չեն փորձում քարոզել կամ պաշտպանել միևմուտն ու արտուրդը, այլ աշխատում են ցույց տալ իրականության օբյեկտիվ պատկերը անհատի սահմաններից դուրս գտնվող աշխարհի «անհեթեթությունը», որպես ճակատագրական փաստ և իրողություն:

Վերջին՝ վեցերորդ հարցը արտուրդի դրամայում լեզվի՝ իր հիմնական գործառնությի՝ իմաստ հաղորդելու կարողությունը կորցնելու հատկանիշի բացահայտումն է:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Արտուրդի դրամայի վերաբերյալ աշխարհում գրվել են բարձրարժեք բազմաթիվ մեծագրություններ, մեծ ու փոքր ուսումնասիրություններ և հոդվածներ... Դրանցից արժանահիշատակն առաջին հերթին, կարծում ենք, Մարթին Էլինի «Փինթերը և նրա պիեսների ուսումնասիրությունը» աշխատությունն է¹, որը նվիրված է Հարոլդ Փինթերի պիեսներում առկա արտուրդի և ոչ-հերոսականության գաղափարի մեկնությանը: Հիշատակելի են նաև Ռիչարդ Ն. Քոյի՝ «Իոնեսկո. պիեսների ուսումնասիրություն» և Ջեյմս Ռոբերտի՝ «Սամուել Բեկետի «Գոդոյին սպասելիս» և այլ պիեսներ» աշխատությունները²: Դրանցից առաջինը նվիրված է Է. Իոնեսկոյի՝ երկրորդ անգամից առջև կանգնած և բախումնային իրավիճակն անիմաստ համարող հերոսների քննությանը, իսկ երկրորդը՝ Ս. Բեկետի պիեսների դրամատիկ դիտարկումներին:

Արտուրդի դրամային նվիրված ուսումնասիրությունների մեջ առանձնանում է Իրանի համալսարանի պրոֆեսոր, թարգմանիչ և թատերագիր Ահմեդ Քամայարի Ա. Մասքի «Իոնեսկոն և նրա թատրոնը»³ աշխատությունը, որը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու արտուրդի դրամայի առավել խորքային դրսևորումների մասին: Գրքի ներածական մասը գրել է ինքը՝ Է. Իոնեսկոն: Աշխատությունը դիտարկում է Իոնեսկոյի հայացքները, երկերը, մասնավորապես՝ պիեսները: Գրքի հեղինակը եղել է Է. Իոնեսկոյի մտերիմներից և այն քչերից մեկը, ով կարողացել է հարցազրույց վերցնել

¹ Տե՛ս **Esslin Martin**: Pinter A Study of his Plays. London. Eyre Methuen Press. 1973. 262 p.

² Տե՛ս **Coe N. Richard**: Ionesco; a Study of his Plays. London. Oliver and Ltd Press. 1971. 206 p., **Robert L. James**: Samuel Beckett's Wating for Godot and Other Plays. New York. Hungry Minds, 1980. 71 p.

³ Տե՛ս **Kaamyabi Mask A.**, Ionesco and His Theater, Namayesh Publications, Tehran.2003. 189 p.

նրանից՝ «Հարցազրույց Ս. Բեկետի և Է. Իոնեսկուի հետ»⁴: Նշելի է, որ Ահմեդ Քաամյաբի Ա. Մասքը եղել է նաև Է. Իոնեսկոյի ստեղծագործությունների պարսկերենի թարգմանիչը: Իսկ թատերական արվեստի գիտակ, պրոֆեսոր Աննա Մըք Մուլլանի «Փորձարարական թատրոն. Սամուել Բեկետի վերջին դրաման»⁵, գիրքը Ս. Բեկետի վերջին դրամայի առաջին ամբողջական վերլուծությունն է՝ ժամանակակից թատրոնի համատեքստում: Աննա Մըք Մուլլանն օգտագործում է վերջին աշխատությունների ուշադիր ընթերցումը՝ իշխանության հայեցակարգերի և դրամայի գաղափարախոսության բացահայտման համար: Հետաքրքիր է, որ գիրքը նորովի է վերլուծում Ս. Բեկետի պիեսները՝ տալով նրանց հնարավոր լավագույն մոտեցումները: Ամերիկացի հետազոտող Ջոզեֆ Մըք Քաննի «Արթուր Ադամովի թատրոնը»⁶ և Նյու Յորքի Քաղաքային համալսարանի Քոլին քոլեջի ռոմանական լեզուների պրոֆեսոր Ջոն Ռեյլիի «Արթուր Ադամովը»⁷ այն երկու գրքերն են, որոնց մեջ արտացոլվում են Ա. Ադամովի թատրոնի ոճն ու արտուրդի պատճառները:

Վերոնշյալ և այլ ուսումնասիրությունների ու արտուրդի դրամայի քննության միջոցով մենք փորձել ենք ցույց տալ, որ արտուրդի դրամայի հերոսները չունեն «հերոսական» և «հակահերոսական» հատկանիշներ, որովհետև նրանք պասիվ են ու անգործունյա: Ատենախոսությունը փաստում է, որ արտուրդի դրաման տարբերվում է ավանդական դրամայից, և այն հակաթատրոնի կամ ոչ թատրոնի տեսակ է, ինչն արդյունք է պոստմոդեռնիստական պայմանների:

Մեր ուսումնասիրության շրջանակը, սակայն, միտումնավոր նեղացվել է՝ թյուրըմբռնումից և սխալ մեկնաբանությունից խուսափելու, խնդիրներն առավել հստակ ներկայացնելու համար: Այդ պատճառով մեր վերլուծությունը սահմանափակվում է արտուրդի դրամայի հերոսների հատկանիշների և փիլիսոփայական համատեքստի քննարկումով: Ատենախոսության **գիտական նորույթն** այն է, որ առաջին անգամ ուսումնասիրության նյութ է դարձել արտուրդի դրամայի ու հերոսների փոխադարձ կապի քննությունը՝ նպատակ ունենալով լրացնել այս բնագավառում եղած բացը: Դա անհրաժեշտ է անել հետևյալ պատճառներով՝ այն կապահովի արտուրդի դրամայի «հերոսի» և «հակահերոսի» էլ ավելի լայն ու համապարփակ ըմբռնում, կքննարկի «ոչ-հերոսի» ի հայտ գալը՝ որպես նոր կերպար, որը տարբերվում է հերոսից ու հակահերոսից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔՆ

Աշխատանքը կատարված է գրականության տեսության ժամանակակից մեթոդներով և սկզբունքներով: Այն շարադրված է համեմատական, պատմաքննական, համադրման մեթոդներով՝ փորձելով քննել ուսումնասիրվող նյութի հիմնական դրսևորումները, խորքային առնչությունները:

Ատենախոսության մեջ կիրառվող գրականությունը վերցված է էլեկտրոնային գրադարաններից, պոստմոդեռնիզմի ու արտուրդի դրամային առնչվող գիտական ամսագրերից, ինչպես նաև օգտագործվել են գրականության պատմության յուրաքանչյուր փուլի հերոսի հատկանիշները նկարագրող գիտական ուսումնասիրություններ՝

⁴ Տե՛ս **Kaamyabi A. Mask**. Interviews with Samuel Beckett-Eugene Ionesco. Namayesh Press . Tehran. 2003. 120 p.

⁵ Տե՛ս **McMullan Anna**: Theater on Trial , Samuel Beckett’s later drama. London. Routledge press. 1993. 155 p.

⁶ Տե՛ս **McCann John Joseph**. The Theater of Arthur Adamov. North Carolina. Studies in the romance languages and literatures: Essays 13. University of North Carolina. Department of Romance Languages .1975. 168 p.

⁷ Տե՛ս **Reilly John H**. Arthur. Adamov. France. Twayne Publishers. 1974. 177 p.

նպատակ ունենալով վերականգել տարբեր հասարակությունների և թատրոնի կերպարների միջև գոյություն ունեցող անբավարար կապը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են թե՛ Ամերիկայի Միացյալ Նահանգների, թե՛ Իրանի Իսլամական Հանրապետության և թե՛ Հայաստանի Հանրապետության գիտական հանդեսներում ու ժողովածուներում տպագրված 6 հոդվածներում և 1 մենագրության մեջ: Ուսումնասիրությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրականության տեսության բաժնում ու երաշխավորվել հրապարակային պաշտպանության:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործած գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ համառոտ ներկայացված են հարցի պատմությունը, ատենախոսության նպատակներն ու խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական հիմքը, հիմնավորված են թեմայի արդիականությունն ու գիտական նորույթը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ ՊՈՍՏՄՈԴԵՐՆԻԶՄԸ ՈՐՊԵՍ ԱՔՍՈՒՐԴԻ ԴՐԱՍԱՅԻ ԵՎ ՈՉ-ՀԵՐՈՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ

Այս գլխում ներկայացվում են պոստմոդեռնիստական հասարակության այն հիմքերը, որտեղ ձևավորվում է աքսուրդի դրաման:

Աքսուրդի դրաման երկրորդ աշխարհամարտից հետո մարդկանց մեջ տիրող խոր հուսահատության հետևանքն է: Այն նաև պոստմոդեռնիզմի արդյունքն է: Պոստմոդեռնիզմը հասկանալու համար անհրաժեշտ է ընկալել այն պայմանները, որտեղ ձևավորվել է այն: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է հասկանալ աքսուրդի դրամայի թելադրած վիճակը և ըմբռնել կերպարների գործողությունների դրոշմապատճառներն ու նրանց գաղափարախոսությունը: Սույն գլխում ուսումնասիրությունը զուգահեռաբար քննում է պոստմոդեռնիստական իրավիճակը՝ որպես աքսուրդի դրամայի նախահիմք:

Նախքան պոստմոդեռնիստական պայմանների ի հայտ գալը մարդկության քաղաքակրթության պատմության յուրաքանչյուր ժամանակահատվածում առկա է, այսպես կոչված, մեծ պատում, որը գտնվում է հասարակության ուշադրության կենտրոնում և վերածվում հեղինակության: Այս հեղինակավոր մեծ պատումն ընդգրկում է մարդկային կյանքի բոլոր բնագավառները, այդ թվում՝ նաև սույն ժամանակաշրջանի մշակույթն ու գրականությունը: Յուրաքանչյուր ժամանակահատվածի նոր մեծ պատումը մերժում է նախորդը՝ դառնալով առավել գերակշռող: Մինչև պոստմոդեռնիզմը մեծ պատումների թվին էին դասվում առասպելը, կրոնական և մարդկային բանականությունը, որոնք որոշում էին սկզբունքային այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են ճշմարտությունը, իրականությունը, բարոյականությունը, տրամաբանությունը, տեքստային պատումները,

ժամանակաշրջանի ավանդույթները... Այս պայմաններում էլ ձևավորվում է արքունի թատրոնը: Նկատելի է, որ արքունի թատրոնն ու դրա փիլիսոփայական համատեքստն ուսումնասիրվում են և՛ զուգահեռաբար, և՛ միասնաբար: Փիլիսոփաներն ու թատերագետները միևնույն ժամանակահատվածում նույն եզրակացության են հանգում, քանի որ նրանց միտքն ու կենսակերպը ձևավորվել են պատմության որոշակի ժամանակամիջոցում:

Պոստմոդեռնիզմը 20-րդ դարի երկրորդ կեսի արևմտյան իրականության նկարագրությունն է: Այդ իրականությունն ընկած է եկեղեցու ժամանակակից ու ավանդական դավանանքի և մինչ այդ եղած ինքնիշխանության արանքում: Այլ կերպ ասած՝ պոստմոդեռնիզմը հիմնականում սահմանվում է որպես ամեն ինչի ինքնավարություն կամ որևէ այլընտրանքային ինքնավարության մերժում: Պատմականորեն պոստմոդեռնիզմն ուրվագծվել է համաշխարհային երկու պատերազմներից առաջ, թեև դրանք էլ հաջորդել են պոստմոդեռնիզմի սկզբնավորմանը:

Նկատելի է, որ փիլիսոփաները թերահավատորեն էին վերաբերվում մոդեռնիստական արժեքներին ու սկզբունքներին, սակայն մոդեռնիզմի հիմնական հատկանիշներն սկսում են ձևավորվել հատկապես գեղագիտության ու արվեստի հենքի վրա: Որպես մոդեռնիզմի առանցքային թեմա՝ Իհաբ Յասսանը իր «Պոստմոդեռնիստական շրջադարձ»⁸ աշխատության մեջ նկարագրում է մարդասիրությունը՝ նշելով, որ հինգ հարյուր տարի անց մարդասիրությունը կհասնի իր ավարտին, որովհետև այն փոխակերպվել է մի բանի, որը հուսահատորեն կկոչվի «պոստհումանիզմ»:⁹ Յարկ է նկատել, որ «պոստմոդեռնիզմ» եզրույթն իր բուն կիրառությամբ բացառապես օգտագործվել է արվեստում որոշակի միտումներ արձանագրելու համար. այդ միտումները մենք այժմ հակիրճ անվանում են «մոդեռնիստական արվեստ»⁹:

Պոստմոդեռնիստական փիլիսոփայությունը վերանայում է ճշմարտության խորաթափանց գաղափարը՝ պարզելու՝ հասանելի՞ է այն արդյոք, թե՞ ոչ: Յամածայն փիլիսոփայական պոստմոդեռնիզմի՝ մարդկային ձիրքի կիրառումը միակ միջոցն է, ըստ որի մարդը հասկանում է, թե իրերն ինչպես են դասավորված: Պոստմոդեռնիզմի համար գոյություն չունի բացարձակ ճշմարտություն, որի վրա հիմնված լինեն մեր բանականությունն ու հասարակության հիերարխիական կառուցվածքը: Վիճարկելով մոդեռնիզմի ճշմարտությունը՝ Ֆ. Նիցշեն վերանայում է արվեստի ու գեղեցկության գաղափարը: Ըստ նրա՝ թեև «մոռանում ենք, թե ինչպես է մեր երևակայության մեջ ծագում գիտելիքը, այն ծնունդ է տալիս փոխաբերության /կամ երևակայության/, և ճշմարտությունը ոչ այլ ինչ է, քան փոխաբերությունների, փոխանունությունների, անտրոպոմորֆիզմի շարժունակ բանակ, որը տևական գործածությունից դառնում է հաստատուն, աներկբա և պարտավորեցնող: Եժմարտությունն այն փոխաբերությունն է, որի մասին մարդը մոռացել է»¹⁰: Ընդդիմանալով լուսավորչականության սահմանումներին՝ արդեն հասուն Ֆ. Նիցշեն մերժում է պատճառի, գիտելիքի ու բարոյականության բացարձակ գաղափարները: Նա դրանք դիտարկում էր որպես ժամանակի այնպիսի «կուռքեր», որոնք ստեղծել էր մարդը, բայց պաշտում էին հասարակության լիիրավ անդամ լինել ցանկացողները: Մտածողի կարծիքով՝ դրանք իդեալականացվել են, որովհետև արտացոլում են մարդկային թաքուն մղումները: Խոսելով արվեստի գործերի մասին՝ նա գրում է. «Գեղեցիկն ու տգեղը ճանաչվում են այնքանով, թե որքանով են առնչվում մեր առավել հիմնարար

⁸ **Տե՛ս Hassan Ihab.** The postmodern turn : essays in postmodern theory and culture. Columbus. Ohio State University Press. 1987. 267 p.

⁹ **Տե՛ս Berys Gaut and Dominic McIver Lopes.** The Routledge Companion to Aesthetics Second Edition. London; New York: Taylor & Francis e-Library. Routledge. 2005. p.162.

¹⁰ **Nietzsche Friedrich:** Early Greek Philosophy & Other Essays. Translated by: A. Mügge Maximilian. Edited by: Dr Levy Oscar. New York. The macmillan company. 1911. p.180.

արժեքների պահպանմանը: Անհմաստ է ցանկանալ ցուցադրել սրանից առավելի գեղեցիկ ու տգեղ որևէ բան»¹¹: Ֆ. Նիցշեն մերժում է բացարձակ փաստերը, ճշմարտությունը, օբյեկտիվ արժեքները, ռացիոնալն ու գիտելիքը: Փոխարենը նա հավատում է հարաբերականությանը: Նախկին արժեքների և չափանիշների այս անկումն ու հարաբերականության բարոզը հիմք են հանդիսացել պոստմոդեռնիզմի այն պայմանների ստեղծմանը, որոնք դարձել են արևմտյան դրամայի նախապայմանները: Արևմտյան դրամայի հերոսները ոչ մի արժեքի չեն հավատում: Այդ պատճառով ուսումնասիրությունը հետևում է պոստմոդեռնիստական պայմաններին՝ որպես ոչ-հերոսականության առաջացման հիմք:

Պոստմոդեռնիզմի և մոդեռնիզմի միջև բախումը ենթադրում է հեռանկար նաև արվեստի փիլիսոփայության հարցում: Եթե մոդեռնիզմը հավատում ճշմարիտ ու կեղծ մեկնաբանություններին, ապա պոստմոդեռնիզմը կասկածի տակ է առնում դրանք: Ավելին, մոդեռնիզմն իր հերթին ընդունում է գեղարվեստական բարձրարժեք որոշ ստեղծագործություններ, որոնց, սակայն, պոստմոդեռնիզմը թերահավատորեն է վերաբերվում դրանց՝ իբրև գեղարվեստական ստեղծագործությունների, ամենից առաջ սոցիալական ու պատմական հիմքի պատճառով, այսինքն՝ նրանց մոտեցումները դառնում են հարաբերական, հաճախ՝ հակասական: Այլ կերպ ասած՝ մոդեռնիստական արվեստը գերազանցում է ժամանակի, տարածության ու մշակութային սահմանները, մինչդեռ պոստմոդեռնիստականն այդպես չի վարվում և չի տարբերակում արվեստը ոչ արվեստից կամ բարձր արվեստը՝ ժողովրդականից. «Փոխարենը նրանք հակված են վիճելու, որ արվեստը ոչ թե բնական, այլ մշակութային և սոցիալական երևույթ է»¹²: Տրանսցենդենտալ արվեստի գոյության դեպքում ժամանակակից մարդու բանականության և ճշմարտության նկատմամբ հավատի անկումից հետո նորագույն մարդու համար ոչ մի իդեալ չի մնում: Ասել է թե՛ իդեալիզմը՝ որպես հերոսականության շարժառիթ, մերժված է:

Մոդեռնիզմի և պոստմոդեռնիզմի կրկնակի հակադրման առաջնային իմաստը հստակության բացասումն է, որը բխում է արժեքների ճշգրիտ ու ամուր արժեքների հիերարխիայից: Նման հակադրությունը հիմնված է նաև պայմանների փոփոխություններից, որոնք արտահայտվում են ամտարբերության ու ոչ-հերոսության դրսևորմամբ:

Պոստմոդեռնիզմի առանձնահատկությունների վերաբերյալ փիլիսոփաների տեսակետներն արմատապես տարբերվում են միմյանցից: Թեև նրանք վերջնական համաձայնության չեն եկել, սակայն հնարավոր է հղումներ կատարել մի քանի ընդհանուր հանգամանքների շուրջ: Պոստմոդեռնիզմում այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «պատճառը», «ճշմարտությունը», «ավանդույթը», «տրամաբանությունն» ու «բարոյականությունը», որոնք սահմանում են մարդկային կյանքը և իմաստավորում այն՝ հանգեցնելով զլխավոր իմացաբանության կենտրոնացմանը, այսուհետև կորցնում են իրենց իմաստն ու ինքնուրույնությունը: Պոստմոդեռնիզմը հիմնովին ներկայացնում է հեղինակությունների փլուզումը: Այս նպատակով առաջ են քաշվում նոր չափանիշներ, մասնավորապես՝ մարդու և բանականության հեղինակությունները: Նախորդ երեք դարերի ընթացքում մարդկային հեղինակությունը ենթարկվել է մահացու երեք հարվածների, որոնք ուղղված են եղել հետևյալ ոլորտներին՝ Կոպերնիկոսի հեղաշրջման միջոցով տիեզերքի՝ իր տան կենտրոնացումը, դարվինիզմի նոր ծագումնաբանությունը, որը կոտրել էր նրա հեղինակությունը և ֆրոյդիզմի հոգեվերլուծությունը, որը սասանում էր մարդուն ու շեղում գոյության իր ամբողջականությունից:

Արևմտյան դրամայի հերոսը, որպես այդպիսին, հերոս չէ, քանի որ պասիվ է ու անգործունյա: Ի տարբերություն դասական դրամայի հերոսների՝ նա չի պայքարում որևէ

¹¹ Nietzsche Friedrich: The Human is This. Trs: Firuzabadi Said. Tehran. Jami Press. 2001. p. 123.

¹² Berys Gaut and Dominic McIver Lopes. The Routledge Companion to Aesthetics. Second Edition. London. Taylor & Francis e-Library. Routledge Pewss. 2005. p. 159.

արժեքի համար. եթե անգամ բարձրացնում է իր սուրը, դեռ չգիտե՝ կհարվածի¹³, թե՞ ոչ: Յ. Փինթերի «Տունդարձ»¹³ և Է. Իոնեսկոյի «Ռնգեղջյուրը»¹⁴ ստեղծագործությունների մեջ նման կերպարներ են թեղին և Բերանժեն. «Գողոյին սպասելիս» պիեսի կերպարների պես նրանք ևս թափառում ու պրպտում են՝ կորցնելով սեփական արժեհամակարգը: Նրանք բնականաբար չեն տառապում, որովհետև տառապելն ինչ-որ արտաքին արժեքին հավատալու արդյունքն է:

Աբսուրդի դրամայի հերոսներն անտեսում են բոլոր *մետապատումները*, անգամ արդիականությունը՝ որպես վերջին մետապատում: Այստեղից ծագում է պոստմոդեռնիստական պայմաններում աբսուրդի դրամայի մետապատումներն անտեսելու պատճառների ըմբռնման անհրաժեշտությունը:

Որպես սոցիալական իրադրությանը ենթարկվող մշակութային արտահայտչամիջոց՝ պոստմոդեռնիզմը չունի հստակ ու մոնոլիտ ձև անորոշության, հարաբերականության ու բազմիմաստության պատճառով: Դրա ակնհայտ դրսևորումը շեղվածությունն է դասական ու ժամանակակից սկզբունքներից: Այլ կերպ ասած՝ քանի որ պոստմոդեռնիզմը հիմնականում սահմանում է արդյունքի «անհստակություն», աբսուրդի դրաման ևս թերահավատորեն է վերաբերվում դրամայի բոլոր նորմերին՝ առանց նորն առաջարկելու:

Պոստմոդեռնիստական ժամանակաշրջանի մարդը մեռնակ է, ոչ ոք նրան չի տեսնում: Նա զուրկ է արմատներից, տատանվում է՝ առանց որևէ չափանիշի, ուստի նա ոչ մերժում է, ոչ էլ որևէ բան է ընդունում: Նախկին բոլոր հավատալիքները մերժելու համար, մասնավորապես եկեղեցու հիմքերի ավերումը, ժամանակակից մարդը /Ռ. Դեկարտ/ պետք է օժտված լինի «ես մտածում եմ, հետևաբար գոյություն ունեմ» հավատամքով: Պոստմոդեռնիստ անհատը, սակայն, տատանվում ու խորասուզվում է վակուումի մեջ՝ չունենալով մնալու որևէ տեղ: Նման իրավիճակ կարելի է տեսնել աբսուրդի դրամայում. տատանվող, օտարացված, կայուն հավատից զուրկ մարդիկ, որոնք սպառողական շրջանի արտադրանքն են: Սպասելը Գողոյի «ինքնավարության» արտադրանքն ու հավաստիքն են: «Տունդարձ» ստեղծագործության կերպարները նույնպես գոյություն չունեն սեռական հարաբերությունների վրա կառուցված արտադրության ու սպառման շրջանում:

Պոստմոդեռնիստ անհատը ոչ մերժում, ոչ էլ ապացուցում է որևէ բան: Պոստմոդեռնիստական դրամայի հերոսը ևս ոչ պայքարում է, ոչ էլ որևէ կուռք է պաշտում: «Գողոյին սպասելիս» պիեսի հերոսը ոչ մի պայքարի չի մասնակցում: Նրա կարծիքով ստեղծված իրավիճակն այնքան էլ վատ չէ: Ոչ մի հակասություն կամ հակաճառում գոյություն չունի, որովհետև չկա որևէ կայուն հավատ դեպի պայքարը: Ահա ինչ է ասում Վլադիմիրը Էտրագոնին. «Ինչո՞ւ գոյություն չունի որևէ հստակ բան, ո՞վ էս դու ինձնից բացի»¹⁵: Երբ նախկին բոլոր ինքնավարությունները խարխվում են, ոչ մի կայուն բան չի մնում: Նոր դրամայում ակնհայտ երևացող անորոշությունը պոստմոդեռնիստական իրավիճակին բնորոշ առանձնահատկություն է: Հստակ հավատքից առանձնացած հերոսը հանգիստ ու անհոգ է թվում: Իրականում Բեկետը «Գողոյին սպասելիս» պիեսում դրամայի է վերածում դատարկության գաղափարը»¹⁶:

¹³ Տե՛ս **Pinter Harold**. The Home Coming. New York. Grove Press. 1994. 82 p.

¹⁴ Տե՛ս **Ionesco Eugene**. Rihinoceros and other plays. Trs: Derek prouse. John Calder. Ltd Publishing. 1960. 160 p.

¹⁵ **Becket, S.** End Game, Waiting for Godo. Trs.Behroz Haji Mohammadi- Tehran. Qounus. 2000. p. 116.

¹⁶ Տե՛ս **L. Graver and R.Federman**. *Samuel Beckett*. London. Taylor & Francis e-Library Press. 2005. p. 108.

**ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԱՔՍՈՒՐԴԻ ԴՐԱՄԱՆ ԻՔՐԵՎ ՀԱՎԱԴՐԱՄԱ ՓԼԻՍՈՓՈՒՅՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԵՔՍՏՈՒՄ**

Սույն գլուխը քննության է առնում արևմտյան դրամայի սկզբունքները՝ միաժամանակ ներկայացնելով դրամայի նոր տեսակի՝ հակադրամայի դրսևորումները: Այդ նպատակով ուսումնասիրվում են է. Իոնսկոյի, Ս. Բեկետի, Ա. Ադանովի որոշ ստեղծագործություններ: Այստեղ քննարկվում են նաև արևմտյան դրամայի հանրահայտ օրինակներ՝ ցույց տալով վերջիններիս կերպարների էական տարբերությունը նախորդ ժամանակաշրջանների դրամաների կերպարներից:

Արևմտյան դրաման սկիզբ է առել պոստմոդեռնիզմի ժամանակաշրջանում, որն սկսվել է մոդեռնիզմի վերջին շրջանում և վերջնականապես վերածվել գերակշռող իրականության: Մոդեռնիզմն իր ավարտին է հասնում 20-րդ դարի սկզբներին, երբ նույնիսկ նույն դարի վաղ շրջանի փիլիսոփաների բոլոր ջանքերն ուղղված էին մոդեռնիզմի, նրա իմաստի ու դրսևորումների ժխտմանը: Մոդեռնիզմի գլխավոր տարրերից մեկը մարդկային արժանահավատությունն է և խնդրին լուծում հաղորդելու մտավոր կարողությունը: Պոստմոդեռնիզմն այս երևույթը համարում էր անիմաստ պատրանք: Ահա թե ինչու դժվարությունները հաղթահարելու նպատակով իմաստությունը գործի դնող մարդուն /օրինակ՝ Համլետին/ կամ կյանքի սահմանները չընդունող /օրինակ՝ դոկտոր Ֆրոստին/ կամ սեփական ծանծրալի կյանքը բարելավողին /օրինակ՝ Մակբեթին/ պատկերելու փոխարեն արևմտյան դրամայում է սեփական անհանգիստ հոգեվիճակը չհասկացող մարդկանց, իրավիճակը կամ նրանց, ովքեր ոչինչ չեն անում իրենց դրությունը փոխելու համար (օրինակ՝ Յ. Փիլիպի «Վերադարձ տուն» կամ Ս. Բեկետի «Գողոյին սպասելիս» պիեսների հերոսները):

Հակառակ դասական փիլիսոփայության, որի թատերական խորհրդանիշը էդիպ արքան էր, իր փիլիսոփայական հզորությամբ ու ծանրակշիռ գերազանցությամբ և ժամանակակից մարդու, որի սկզբունքը «լինել, թե չլինելու» փիլիսոփայական կրթությամբ օժտված Համլետն էր, պոստմոդեռնիստական մարդը ճաշակում է արժեքների փլուզումը: Նույնիսկ լեզուն այլևս վստահելի չէ նրա համար: Արևմտյան դրամայում, որը պոստմոդեռնիստական իրականության արդյունքն է, տեսնում ենք, որ մարդիկ հաղորդակցության տեսանկյունից թույլ են, քան իրենց նախնիները: Նրանք խոսում են, սակայն անիմաստությունը խոչընդոտում է իրենց ուղերձի փոխանակմանը: «Գողոյին սպասելիս» պիեսի կերպարները նմանատիպ մարդկանց ակնառու նմուշներն են: Բեկետի ամբողջ ստեղծագործությունը պայքար է անանունին անուն տալու համար. «Ես պետք է խոսեմ, ինչ էլ որ դա նշանակի: Ոչինչ ասել չունենալով, ոչ մի խոսք, բայց ուրիշների բառերից, ես պետք է խոսեմ... Ես պետք է խմեմ օվկիանոսը, օվկիանոսը կա ուրեմն»¹⁷: Այս պիեսներում լեզուն ծառայում է որպես անկում կամ լեզվի ցրվածություն: Բեկետի կարծիքով՝ եթե գոյություն չունի հստակություն, գոյություն չունեն նաև որոշակի ուղերձներ, ուստի հստակության հասնելը հնարավոր չէ: Գողոյի խոստումներն անհաստատ ու անորոշ են: «Խաղի վերջը» պիեսում աղոտ երևույթն է ղեկավարում: Հենը անհանգիստ հարցնում է. «Մենք չե՞նք սկսում... որևէ ... բան նշանակել»: Քլովը միայն ծիծաղում է. «Մի բան նշանակել: Ես ու դու մի բան նշանակել: Նրանք սկսում են պարզ թյուրմբանություններից ու մեծախոսություններից, որոնք հաղորդակցվել չկարողանալու, կլիշեների, հոմանիշների կրկնությունների, ճիշտ բառը գտնել չկարողանալու, պատկերավորման ոճի կորած քերականական կառույցների, կտրուկ հրամանների միջոցով

¹⁷ **Bloom Harold.** Samuel Beckett's *Waiting for Godot* / edited and with an introduction by Harold Bloom.. Infobase. New York. 2008, p. 105.

հաղորդակցվելու, կետադրական նշաններն անտեսելով՝ ցույց տալու համար, որ լեզուն կորցրել է իր գործածությունը՝ որպես հաղորդակցման միջոց, որովհետև հարցերը վերածվել են պատասխան չակնկալող փաստերի:

Բեկետի պիեսներում, սակայն, «լեզվի և իմաստի ցրվածության ձևական նշաններից բացի, առավել կարևոր են երկխոսությունները, որոնք հաճախակի փլվում են կապակցված չլինելու պատճառով՝ արտահայտելով բառիմաստի կորուստ /երբ բանբերին հարցնում են՝ արդյոք նա դժբախտ է, վերջինս պատասխանում է. «Չգիտեմ, պարոն»/, կամ կերպարների՝ քիչ առաջ ասվածը չհիշելով: Օրինակ՝ Էստրագոնն ասում է. «Կամ անմիջապես մոռանում են, կամ երբեք չեն մոռանում: Անիմաստ աշխարհը, որը կորցրել է իր վերջնական նպատակը, երկխոսությունը, դարձել է ժամանցային խաղ, ինչպես «Խաղի վերջը» պիեսում Չեմը նշում է՝ պղպջակ, պղպջակ»¹⁸:

Մարդու համար նոր թատրոնի կերպարների կարծիքով՝ լեզուն սովորական միջոց է, որը կորցրել է միտք արտահայտելու իր նվազագույն կարողությունը. «Սակայն հերոսները փորձում են հաղորդակցվել, որտեղ հաղորդակցությունն անհնար է, գռեհիկ կամ սարսափելի ծիծաղելի, ինչպես կահույքի հետ գրուցող խենթությունը»¹⁹: Լեզվի այս փոփոխությունը, որը նկատվում է նաև արևմտյան դրամայում, ուսումնասիրվել է պոստմոդեռնիստական փիլիսոփաների կողմից ևս: Այնուհայտ է պոստմոդեռնիզմի ամենանշանավոր փիլիսոփա Ֆ. Եիցերի գաղափարների ազդեցությունը նույն ժամանակաշրջանի մտածողների վրա: Օրինակ՝ «Փիլիսոփայական հետազոտություններում»,²⁰ ավստրո-բրիտանացի լեզվի փիլիսոփա Լ. Վիթգենշթայնը գտնում է, որ ժամանակակից մարդու համար գոյություն չունի մտածողության հիմք:

Աբսուրդի դրաման առաջացել է նման հիմքի վրա: Նոր աշխարհում այն դուրս է մղում արժեքների բացակայությունը: Աբսուրդի դրաման ինքնին անիմաստ չէ. այն իմաստի կամ բովանդակության շեշտն ուղղում է նոր աշխարհի արժեքների բացակայության վրա: Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջում կրոնական հավատալիքների փլուզումը քողարկվեց ու փոխարինվեց զարգացման, ազգայնականության և ամբողջատիրական բազմաթիվ արժեքների հանդեպ հավատով: Այս ամենը ծածկվեց մոխրով: 1942-ին Ա. Կամյուն առաջ քաշեց այն տեսակետը, թե ինչու մարդը չպետք է փրկություն գտնի ինքնասպանության մեջ, եթե կյանքն իմաստազրկվել է: «Սիզիփոսի առասպելում» նա փորձում է ախտորոշել մարդկային իրավիճակը հավատալիքների աշխարհում. «Պատճառաբանությամբ բացատրվող աշխարհը, որքան էլ մեղսավոր լինի, ծանոթ է: Տիեզերքում, սակայն, որը հանկարծ զրկվում է պատրանքներից ու լույսից, մարդն իրեն օտար է զգում: Նա գտնվում է անվերադարձ աքսորավայրում, որովհետև զուրկ է իր կորած հայրենիքի մասին հիշողություններից, քանի դեռ կորցնում է խոստացված երկիր վերադառնալու մասին հույսը: Մարդուն կյանքից, դերասանին բեմից բաժանելը, արդարև, փոխարինվում է արևմտյան զգացումով»²¹: Աբսուրդի դրաման ի հայտ է գալիս՝ պարունակելով հրապուրանքի, իմաստության, կրոնի, ձգտումի և այլնի մասին վերացական բովանդակություն:

Ինչ վերաբերում է արևմտյան, Բեկետը, ինչպես և Իոնեսկոն, համարվելով արևմտյան դրամատուրգներ, հարցազրույցի ժամանակ մերժում են այս կոչումը: Հաշվի առնելով այս հարցազրույցը՝ Մ. Էսլինը փորձում է ապացուցել հեղինակների հեռանկարները.

«**Հարց.** - Քննադատները Ձեզ և Էժեն Իոնեսկոյին դասակարգո՞ւմ են արևմտյան դրամայի դրամատուրգների շարքին:

¹⁸ **Esslin Martin.** The Theatre of The Absurd. London. Pelican book Press.1968. 462 p.

¹⁹ Նույն տեղում, էջ 32:

²⁰ **Տե՛ս Wittgenstein Ludwig.** Philosophical Investigations. Trs: E. B. M. Anscombe. UK. Basil Blackwell Press. 1986. 250 p.

²¹ **Albert Camus,** Le Mythe de Sisyphe .Paris: Gallimard. 1942, p. 18.

Բեկետ. - Դա միայն նրանք են ասում, կոչումները իմաստ չեն արտահայտում:

Իոննեսկո. - Ես չեմ սիրում կոչումներ, դրանք չափազանց պարզունակ են և ոչ մի իմաստ չեն արտահայտում»²²:

Լրագրող Քաամյաբի Մասքի և Մարթին Էսլինի քննարկումն ուսումնասիրելիս կարելի է եզրակացնել, որ Մ. Էսլինը պնդում է իր կարծիքը.

«Քաամյաբի Մասկ. - Իոննեսկոն երբեք չի ընդունում իր դրամատուրգիայի մասին մեծան պիտակավորում:

Էսլին. - Ճիշտ է, քանի որ հեղինակը տեսաբան է: Նա պարզապես ներկայացնում է տեսությունը՝ անձնական գաղափարներին զուգահեռ: Նա չի ցանկանում լինել տեսական գիտնականների հետ, ովքեր էլ, որ նրանք լինեն: Այնուամենայնիվ, ես խոսել եմ նրա հետ: Կարծում եմ նա համաձայն է իր պիեսների մեկնաբանությունների հետ: Ավելին, նկարագրական բանաձև կարելի է գտնել միայն մեկնաբանությունների շրջանակում, որովհետև հնարավոր չէ աշխատանք տեղադրել որոշակի դասակարգման մեջ, եթե չգիտես տիպաբանության ամենալավ բառը»²³:

Կյանքն անիմաստ է: Կյանքի ու ապրելու նպատակը փրկվելն է բիրտ համակարգից, որը ժամանակ չի կորցնում հասարակության անհաջող անդամներին հեռացնելու համար՝ անկախ նրանից՝ ով է այդ անհաջող մարդը՝ «Ոնգեղջյուր»-ի Բերանժե՞ն, թե՞ «Տունդարձի» պիեսի փիլիսոփայության պրոֆեսորը: Նոր աշխարհն աղբարկղ է շարտում այն մարդուն, որը չի կարողանում կատարել համակարգի պահանջած գործառնությունները մետաղաշարձանների ավտոտնակում թողած հնացած մեքենայի պես:

Թվում է՝ աբսուրդի դրամայի հեղինակին հետաքրքրում է «ոչնչի» գաղափարը: Բայց եթե անտեսենք այս հանգամանքը, մենք նույնպես կհայտնվենք ժամանակակից շրջանի նույն սկեպտիկ պատրանքների հորձանուտում: Մինչ Պրոմեթևսը, Էդիպն ու Սիզիփոսը կանգնած են ճակատագրի աստվածների առջև, Անտիգոնեն, Էլեկտրան ու Յամլետը ազնվորեն և քաջաբար հայտնում են իրենց անհամաձայնությունը թագավորին: Էստրագոնը, Վլադիմիրը, Լաբին և Բերանժեն երբեք չեն մտածել ընդդիմադիր լինելու մասին, որովհետև իրենք ոչ մի կուռք չունեն, որին կարող են հետևել: Նույնիսկ պիեսի վերջում ոչինչ տեղի չի ունենում այս կերպարների աշխարհընկալման կամ գործողությունների մեջ: Դրանք կայուն են մնում, որովհետև ոչ մի հստակ գաղափարախոսություն չունեն պաշտպանելու, զուրկ են որևէ առանձնահատկությունից կամ մնացածից տարբերվելու ակնհայտ ցանկությունից:

Աբսուրդի պիեսների գործողությունների ժամանակն ու վայրը պարզորոշ են, իրական ու ամբողջական դիպաշարի հետ: Նման պիեսներում ժամանակն ու վայրը հաճախ շփոթեցնում են ընթերցողի միտքը, որովհետև այնտեղ աշխարհը պատկերվում է տարօրինակ ու սարսափելի տեսքով: Ճշմարիտ է, որ Է. Իոննեսկոն և Յ. Փինթերը ներկայացնում են համապատասխանորեն անզլիական կամ ֆրանսիական հասարակությունները, սակայն իրականում նրանք արժանահավատ հասարակություն չեն առաջարկում որևէ ժամանակաշրջանում կամ վայրում: Այդ պատճառով այս ոչ հստակ ժամանակն ու վայրը կարող են ընդհանրացվել ցանկացած ժամանակի ու վայրի հետ:

Նոր՝ պոստմոդեռնիստական դրամայի կերպարի էությունը սուբորդինացիան է համայնքի պայմաններին: Համայնքը շրջափակում է մարդկանց և կարողանում է նրանց համար անհատականություն ձևավորել: Հանգամանքներով պայմանավորված մարդը լիովին պասիվ է: Համլետի՝ սոցիումի հանդեպ մեծ խռովությունը երբեք չի ծագի աբսուրդի դրամայի հերոսի գլխում, և նա միայնակ կմնա իր մասին գործողության դրվագում:

²² Kaamyabi Mask, A. Interviews with Samuel Beckett-Eugene Ionesco. Namayesh , Tehran. 2003, p. 27.

²³ Kaamyabi Mask, A. Ionesco and His Theater, Namayesh Publications, Tehran.2003, p. 177.

Է. Իոնեսկոյի ստեղծագործությունները սոցիալ-քննադատական պիեսներ չեն, սակայն դրանք հագեցած են կերպարներով, փոխաբերություններով ու երևակայական տարրերով: Նա զարմանալիորեն օգտագործում է ընդհանուր և հասարակ բառեր, որոնք իմաստի պակաս ունեն: Է. Իոնեսկոն ասում է. «Ես համաձայն եմ հակաթատրոնի կամ ոչ թատրոնի սկզբունքի հետ»²⁴: Նա ոչ թատրոնի երևույթին համաձայնելը կամ թատրոնի դասական հիմքը արմատախիլ անելը պատճառաբանում է այսպես. «Իմ ցանկությունն ու նպատակը թատրոնի բնական ծագումը գտնելն է»²⁵:

Մեկ այլ արտուրդիստ՝ ժան Ժենեն, որը միաժամանակ ֆրանսիացի վիպասան էր, դրամատուրգ և քաղաքական գործիչ, կյանքի սկզբնական շրջանում ոչնչով չէր զբաղվում և ոչ մի կրոնի չէր դավանում: Հետագայում, երբ սկսեց գրել, նրա գլխավոր ստեղծագործությունները դարձան «Պատշգամբ» և «Սևերը» պիեսները: Իրավացի է ամերիկացի գրականագետ Ս. Էսլինը՝ նշելով, որ «Պատշգամբ» և «Սևերը» երկերը Ս. Բեկետի ստեղծագործությունների հետ զուգակշիռներում խիստ տարբեր են: Բեկետը թույլ չի տալիս ընթերցողին ներթափանցել լեզվի մեջ: Նրանք հեռացած են մեկը մյուսից: Բեկետի լեզուն մերկ է, նա լեզվով չի կլանում ընթերցողին: Հակառակ դրան՝ Ժենեն, հորձանուտ ստեղծելով, ընթերցողին խորտակում է լեզվի մեջ: Ժենեի լեզուն կլանում է ընթերցողին: Բեկետի երկերում զգացվում է լեզվական մերժում: Արտուրդի դրամատուրգը, սակայն, ուզում է վակուում ցույց տալ՝ լեզուն օգտագործելու միջոցով: Բեկետն այս վակուումն արտահայտում է տալիս զարդարված լեզվի միջոցով, մինչդեռ Ժենեն այն ցույց է տալիս տարածությամբ, որը հագեցած է բառերով: Նա օգտագործում է ոչ թե արտահայտչական, այլ զգայական լեզու: Իր ստեղծագործական ճանապարհին ժան Ժենեն գործ ունի տարբեր ժանրերի՝ բանաստեղծության, ինքնակենսագրության, դրամայի հետ: Հետագայում նա հետաքրքրվում է քաղաքական խնդիրներով:

Արտուրդի թատրոնի մեկ այլ դրամատուրգ՝ Արթուր Ադամովը, իր «Խոստովանություն» երկում նկարագրում է հոգեբանական լուրջ ճգնաժամ, որը դառնում է գրական աշխարհի ամենամեծ ինքնաբացահայտումներից մեկը: Գրքի սկզբնական հատվածը (1938, Փարիզ) մետաֆիզիկական չարչարանքի մասին է՝ խոր փաստարկումներով, որն էքզիստենցիալ գրականության և արտուրդի դրամայի հիմքն է. «Ի՞նչ կա: Նախ և առաջ գիտեմ, որ ես կամ: Բայց ո՞վ եմ ես: Միակ բանը, որ գիտեմ իմ մասին, այն է, որ ես տառապում եմ: Այս տառապանքը գալիս է նրանից, որ իմ ծագման հիմքում կա խեղում, բաժանում, և ես բաժանված եմ, չեմ կարող ասել ինչից, բայց բաժանված եմ»: Ադամովն ավելացնում է. «Նախկինում այն կոչվում էր Աստված, իսկ հիմա այն ոչ մի անուն չունի»²⁶: Սա Ադամովին ստիպում է բեմի վրա ներկայացման միջոցով «մարդու միայնությունը, հաղորդակցման բացակայությունը, որքան հնարավոր է, արտահայտել չնշակված և տեսանելի»²⁷: Ադամովի առաջին «Նմանակում»²⁸ պիեսն այս գաղափարի արդյունքն է:

«Ներխուժում» պիեսն իմաստի, անհույս ու անիմաստ որոնման մասին է: Այն հետաքննություն է՝ գտնելու համար մի պատգամ, որն իմաստ կտա կուտակված մի շարք թղթերի: Այն անկարգությունը, որ Ազնեսն է բերում, ցուցադրում է հաղորդակցման ու իրականության շփոթեցնող բնույթը մյուս մարդկանց համար: Դա նշանակում է մի հաղորդակցում, որն անհնար է Պիեռի համար: Նա նախընտրում է մեկուսացումը, քանի որ հաղորդակցումը նրա համար շատ դժվար է դառնում: «Ներխուժման» ամենաակնառու

²⁴ **Kaamyabi Mask**, A. Ionesco and His Theater, Namayesh Publications, Tehran. 2003, p. 71.

²⁵ **Kaamyabi Mask**, A. Esslin Martin Talking to Kaamyabi Mask (epilogue of Ionesco and His Theater), Namayesh Publications, Tehran. .2003. p.175.

²⁶ **Adamov Arthur**, L’Aveu. Paris. Edition du Sagittaire. 1946, p. 19.

²⁷ **Adamov**, Théâtre II (Paris: Gallimard, 1955), ‘Note prélimitaire’, p. 8.

²⁸ **Adamov, Arthur**. LaParodie, L’Invasion, La Grande ET La Petite, Le Professeur Taranne, Tous contre tous. Paris. Gallimard; Gallimard Edition. 1953. 237 p.

մասը հիմնական կերպարի անհրակալան լինելն է, որը մահացած մի անձ է, և որի գրած-ներն անհասկանալի են: Չարկ է նշել, որ ձեռագրի պատգամը, որի մասին անընդհատ խոսվում է, պիեսում հիմնականում անհմաստ, արտուրդ ու անբովանդակ է: Պիեսի ոչ-հերոսը մահացած գրող ժամն է, որն իր ընկերոջն ու աշակերտին թողել է անվերծանելի թղթերի հսկայական զանգված: «Ներխուժում»-ը պիես է իմաստ գտնելու անհույս փնտրտուքի, անընթեռնելի թղթերի անկարգության մեջ ուղերձի որոնման մասին, բայց իրականում այն վերաբերում է հասարակության, ինչպես նաև ընտանիքում տիրող կարգապահությանը: «Ներխուժում»-ը պիես է ուղերձի բացահայտման մասին, որը կարող է իմաստավորվել անհասկանալի թղթերի զանգվածի մեջ:

Բազմիցս նկատվեց, որ արտուրդի դրամայի հերոս գոյություն չունի: Փոխարենը «Ներխուժում» պիեսում հանդիպում ենք ոչ-հերոսի, որը մահացած է: Պիեսի հերոսը փորձում է գտնել մահացածի ձեռագրերը, սակայն դրանք անիմաստ են ու անհեթեթ: Այլ կերպ ասած՝ պիեսն ընդհանուր առմամբ ոչինչ չի փնտրում: Այն իմաստ կամ բովանդակություն չունի, և կերպարներն ու տեքստը չեն կապակցվում և չեն հասկացվում: Այս թյուրըմբռնումն ու հաղորդակցման պակասը արտուրդի դրամայի հիմքն է: Ինչպես տեսնում ենք, պիեսը ներկայացված է արտուրդի դրամայի հիմնական սկզբունքներով: Ավելին, այստեղ հերոս չկա. այն վերածվել է հակաթատրոնի:

Անկասկած, Ս. Բեկետը համարվում է 20-րդ դարի ամենաազդեցիկ գրողներից մեկը: Մարդկային փորձը, որն արտահայտվում է նրա պիեսներում, մարդկային բնույթի խոր արտացոլումն է: Դրանք բոլորի մասին են: Բեկետի պիեսներում իրտահայտված փորձը կրում է շատ ավելի խոր ու հիմնարար բնույթ, քան պարզապես ինքնակենսագրություն լինելը. «Դրանք բացահայտում են անցողիկության և անհետացման իր փորձը, սեփական «ես»-ի մասին իմանալու ողբերգական դժվարությունը նորարարացման և ավիրման անողորմ գործընթացում, որը տեղի է ունենում ժամանակի ընթացքում, մարդկանց միջև հաղորդակցման դժվարությունները, իրականության անվերջ որոնումն այն աշխարհում, որտեղ ամեն ինչ անորոշ է, և երազի ու արթուն լինելու միջև սահամանագիծն անընդհատ փոփոխվում է, սիրային փոխհարաբերությունների ողբերգական բնույթը և ընկերության ինքնախաբեությունը. դրա մասին Բեկետը խոսում է Պրուստի մասին էսսեում և այլն»²⁹:

